

Վ. Հակոբյան

ՄԱՐՏԻՐՈՍ ԵՐԶՆԿԱՑՈՒ ԶԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈՅԵՐԸ

Մարտիրոս Երզնկացին ապրել է 15-րդ դարի երկրորդ կեսում: Նրա մասին մեզ ոչինչ հայտնի չէ, եթե չհաշվենք Ալիշանի հիշատակությունը նրա կյանքի մի աննշան զեպքի մասին¹:

Մարտիրոս Երզնկացու մատենագրական գործերից մեզ հայտնի է միայն եվրոպական մի շարք երկրներ՝ Իտալիա, Շվեյցարիա, Գերմանիա, Ֆլանդրիա, Ֆրանսիա, Բուսանիա՝ կատարած ճանապարհորդական գրառումները, որը հրատարակում ենք այս հոդվածի վերջում:

Երզնկացին այդ ճանապարհորդությունը մեծ մասամբ կատարել է հետիոտն: Ես, ինչպես ինքն է գրում, 1489 թ. հոկտեմբերի 29-ին դուրս է գալիս Երզնկայից և գնում Կ. Պոլիս: Այնուհետև հաջորդ տարվա հուլիսի 11-ին նալ նստում Կ. Պոլսում, հոկտեմբերի 1-ին հասնում է Վենետիկ: Այստեղ 29 օր մնալուց հետո, դարձյալ՝ նավարկելով հասնում է Անկոնիա և ապա Հոմ, որտեղ Մ. Երզնկացին երեք անգամ տեսակցություն և զրույց է ունենում Հոմի պապի հետ:

1491 թ. հունիսի 9-ին դուրս է գալիս Հոմից, այս անգամ ցամաքով, հետիոտն, նա գնում է 'երմանիա'՝ Կոստանցա, ապա անցնում Շվեյցարիա՝ Բադել, նորից 'երմանիա'՝ Մորագրուրգ, Շպեյեր, Քյոլն և այլ քաղաքներ: Ծանապարհը շարունակելով Մ. Երզնկացին գնում է Ֆլանդրիա: Դժբախտաբար այստեղի քաղաքների մասին նա լուրստամբ է անցնում: Ֆլանդրիայից նա անցնում է Ֆրանսիա՝ Սեն-Դնի, Փարիզ, Էստամպ, Օրլան, Պուատե Շատելրոն և այլ քաղաքներ, հասնում 'Եսպանիա և ապա անցնում Բուսանիա'՝ Սան-Սերաստիա, Պորտուգալի, Սանթ-Անթեր, Օվիդո, Աստուրիայի մի շարք քաղաքներ անցնելուց հետո, հասնում է Իտալիա (հյուսիս-արևմտյան Բուսանիա)՝ Կոմպոստելլ, ապա գնում Ֆինիստերրե հրվանդանը, որը հայտնի է «Cabo de Finisterre» անունով, դրա համար էլ Մ. Երզնկացին այն կոչում է «չեղր աշխարհի...»: Այնուհետև Պիրենյան լեռնաշղթա կղերքները նավարկելով նա հասնում է Կադիքս: Այստեղից էլ հետիոտն ճանապարհում է Բուսանիայի մի շարք քաղաքները մինչև Սելիա, ապա վերադառնում և նավարկելով Ջիրբալտարը հասնում Գրանադայի թագավորության սահմանները՝ դարձյալ հետիոտն գնում Գրանադա, ապա Բուսանիայի Միջերկրականի ափով՝ Ալմանսիա, Քասադիվա, Վալենսիա, Բարսելոն, Պերպինիա, Կատալոնիա անցնելուց

¹ «Այս թուականներէն (1401—1407 թթ.—Վ. Հ.) շատ տարիներ առաջ (թերևս 25 կամ 30), կու յիշուի նա՝ (Մարտիրոս Երզնկացին—Վ. Հ.) նոյնպէս եպիսկոպոս կոչմամբ և շոպասաւոր ս. Լուսավորչին Ս. Գերեզմանին»։ Երբ այն կողմերուն կ'ստպատակեր ծիհան-շահ... կողպտելով ու գերելով զ'Կերճան, և գատ յայլոց՝ Ամիրթէր անուամբ մէկու մ'այլ երկու դասերըր գերի բրաւ իր հեծելոց: Այս խեղճ հօր՝ զթալով Եզրնկայ վանորէից առաջնորդը և եպիսկոպոսը վկայական գիր տուին, որ չըջի ոգորմութիւն ժողովելու և փրկանք տալու զաւակացո. վկայադրոցաց մեկն այլ էր Մարտիրոս...» (Հայ-Վենետ, Վենետիկ, 1890, էջ 104):

հետո մասնավորապես (Ֆրանսիա)։ Շարունակելով ճանապարհը նա գնում է Հյուսիսային Իտալիայի քաղաքները՝ Վերջչելո, Ալեքսանդրիա, Ճենովա, Օրվիատո, Մոնթեֆիատո, Վիտերբո, Հոմ, Օտտիա, Տյուրին, գարձալ Անկոնիա և ապա հայրենիք։ Այսպիսով, Մարտիրոս Երզնկացին այս հակալատան տարածությունը՝ մի քանի տասնակ քաղաքներ և հարյուրավոր գյուղեր կտրել անցել է վեց տարի մի քանի ամիս (1489 թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1496 թ. փետրվարի 20-ը) ժամանակամիջոցում։ Իմաստասեր, մեր ճանապարհորդի գրառումները շատ համատարա են։ Մ. Երզնկացին լինելով ջերմասանդ քրիստոնյա, նրա հետաքրքրվածներ բնականաբար բողոքել է սեփական մասամբ քաղաքների և կղզեկների, նրանց հուսկապ կառուցվածքը, փարթամությունը և շքեղությունը։

Ասկան, նա երբևիցե տեսնածին քաղաքների և սրանց բնակչության քանակի և ապրելակերպի մասին հետաքրքիր տեղեկություններ է հաղանում։ Մի շարք քաղաքներ նա կոչում է ոչ թե իրենց անուններով, այլ ավելի քաղաքում կառուցված աչքի բնիկ և կղզեկների անունով. օրինակ՝ գերմանական Էբս-լա-Նապել քաղաքը կոչում է Մանթա Մարիալ, որովհետև այստեղ է գրտնրվում ս. Մարիամին նվիրված և կղզեկին, իսպանական Օվելլո քաղաքը (Աստուրիայում)՝ Ման-Մարիալոր և կղզեկու անունով կոչում է Մանուսիալոր և այլն։

Ինչն է կել Մ. Երզնկացու արչափ հետափոր, փորձություններով և դժվարություններով լի, անձանով երկրներ ճանապարհորդելու իսկական նպատակը։ Հեղինակի այս ուղեգրությունից խմանում ենք, որ նա սրպես մոլի սանդ քրիստոնյա բուն ցանկություն է ունեցել տեսնելու և երկրպագելու Եվրոպայի տարբեր մասերում գտնվող տաճարայինների և այլ սրբերի հիշատակին կառուցված և կղզեկները և դանազան սրբերի ու Կրիստոսի մասունքները և ժրեղեն ապացույցները։ Այլ մասին նա ահա թե ինչ է գրում իր ճանապարհորդության նախօրերին.

«Են՝ Մարտիրոս միայն ախուհամբ կախկապու Երզնկացի... որ ի վաղուց հետև փափարքի սուրբ զլիաւոր առարձիոց գերեզմանին և սուրբ Յակոբայ գերեզմանին տեսանելոյ։ Եւ լիորժամ հասեալ ինձ, անարժանիս արժանատորիկ տեսեանց նոցա, զի հաւնալազ սիրաւ փափարքը, բաւ ումեք, ոչ կարի բաւանկ զխորհուրդ սրտի խնոյ և հանապաղ տաղնապէի ի սրտի խմումու Աղիլի ուշ, երբ նա տեսնում է Իսպանիայում գտնվող ս. Հակոբի գերեզմանը, գրում է. «Եւ գնացեալ մտի ի սուրբ գերեզմանն և անկեա ի վերայ երեսաց խնոց, երկիրպապի և մեղաց թողութիւն խնդրեցի... Եւզում արտաւոր զփափար սրախ կատարեցի...» (բնագրումները ամենուր մերն են — Վ. Հ.)

Չնայած հեղինակի այս պարզ ցուցումին, այնուամենայնիվ կա կարծիք, ըստ որի նա՝ Մ. Երզնկացին՝ զրեկով որ Կրիստոսափոր Կոլոմբոսը գտել է Ամերիկան, ինքն էլ ուղեց նոր աշխարհներ գտնելու նա դուրս եկավ Հայաստանից, անցավ ամբողջ Եվրոպան և Ապանիայի վրայով հասավ Ատլանտան օվկիանոսի կղերքը։

Եթե ճիշտ է այս կարծիքը, ահա գեպքում ինչպես հաշտեցնենք ստացվող հակասությունը, չէ՞ որ Մ. Երզնկացու ճանապարհորդությունը սկսվեց Կոլոմբոսի կողմից Ամերիկայի գյուտից մի քանի տարի առաջ՝ 1489 թ.։ Երբ

1 Հ. Անտոյան, «Հայոց անձնանունների բառարան», հ. Գ, էջ 283։

բորդ՝ Մ. Երզնկացին, ինչպես ստիպած է վերը բերված հաստատում, Եվրոպայից գտարս չի գնացել, մի՞թե նա աշխարհագրական հայտնագործությունը Եվրոպայում էր կատարելու։ Այս կարծիքն արդյունք է Մ. Երզնկացու ճանապարհորդական նոթերի մի հաստատմի Անն-Մարտենի ոչ ճիշտ հասկանալուն և թարգմանությունը Անն-Մարտենը մեջ բերելով այն նախապեսի խոսքերը¹, որի նախով Մ. Երզնկացին շարունակելու էր իր ճանապարհորդությունը, գրում է.

«Մարմից է լինել սովելի պարզ մի լեզու, սովելին հարկավոր է համոզվելու համար, թե խնդիրն անհարական կամ ձկնորսական մի հասարակ ձևանարկման մասին չէ, որովհետև այս շարժաստիճաները բախտականին բացահայտ կերպով անհետախույս են այս խոսքերով, այլ խնդիրը իրապես վերաբերում էր նոր երկրների որոնմանը, հայտնագործությունը նպատակով արված մի խաղական ուղևորություն»²:

Վերահիշյալ հաստատմից երևում է, որ Մ. Մարտենի խոսքը վերաբերում է ոչ թե Մարտիրոս Երզնկացուն, որն իրը ճանապարհորդում էր նոր երկրներ գտնելու, այլ այն նախին, որով հայ ճանապարհորդը շարունակելու էր իր ճանապարհորդությունը Իսպանիա հասնելուց հետո³:

Մ. Մարտենը հիմք բնորոշելով նախապեսի այն խոսքերը, թե «ես ի համատարած ծովուն կերթամ... որ բոլորենք գաշխարհս...» և վերջին նախադասությունն էլ թարգմանելով «le tour du monde» (էջ 343, աշխարհի շրջան կամ շուրջերկրյա), ենթադրում է, որ խոսքը վերաբերում է նոր երկրներ գտնելու նպատակով ճանապարհորդելուն (էջ 345): Այս ենթադրությունը նա փորձում է համոզանել մի այլ սովյալով։ Արշավախումբը իրը հասնում է Անգլիայից քաղաքներից մեկին, համանորեն Գաղիքսին, նախապես և ուրիշները իրը գնում են Սեփիլիա Բյարելյա թաղուհուն անտառները:

Այստեղից Մ. Մարտենը ենթադրում է, որ նրանք գնացել են թաղուհուն գեղացիության արշավանքի արդյունքների մասին (էջ 345), որից հետո նա սովյալում է. «Եմ կարծիքով այլ (նախապեսի Սեփիլիա գնալը — Վ. Հ.) չպետք է թույնի ոչ մի կասկած այս արշավանքի բնույթի մասին» (էջ 345):

Նախ Մ. Մարտենը սխալվում է, երբ «Բոլորենք գաշխարհս» հասկանում է շուրջերկրյա ճանապարհորդություն և թարգմանում «le tour du monde», որովհետև երբ Մ. Երզնկացին Բիսկայից նախաբերելով հասնում է Գաղիքս, այլ-

¹ «...և նախաբերն ասաց թե, կանուս ի նաւս, ապա ասացէր գտարս (Մ. Երզնկացուն Վ. Հ.), որ գիտեմայ, ես ի համատարած ծովուն կերթամ, յիս՝ նաւս պարկան չի մտներ, այս դասար մարգս որ կայ նաւս ծառայութիւնք են, մեք գմեր արեմուս թարկն սովեր ենք յաստուած ապու ինեայ եմք, թէ որ նախաբերն բերէ, որ աստուած ապառէ գմեք, որ բոլորենք գաշխարս նա լաւ է և թէ չէ նայ գայն Աստուած գիտէ»:

² Journal Asiatique, 1826., p. 343: Վերահիշյալ հաստատմը բերում եմ բառացի. «Peut-il y avoir un langage plus clair? en faut-il davantage pour etre convaincu, qu'il ne s'agissait pas d'une entreprise ordinaire, pour le commerce ou pour la peche: car ces motifs sont assez evidemment exclus par ce discours; mais qu'il s'agissait reellement de la recherche de nouvelles terres, enfin d'un véritable voyage de decouvertes».

³ Վ. Պատկանյանը «Համատուտ անտառներուն հայ պատմական գրականություն» («Փորձ», 1880, № 1, էջ 1—28) հոդվածին առընթեր հավելվածում բերելով հայ պատմիչների հրատարակություններից հուլիսի, Մ. Երզնկացու այս ճանապարհորդության մասին գրում է. «Իր ուղևորությունը նշանավոր է նրանով, որ նա 70 օր անցկացրեց Ատլանտյան օվկիանոսի վրա՝ մասնակից լինելով բիսկայիցիների մի ծովային արշավանքին, որի նպատակը, Անն-Մարտենի կարծիքով, նոր երկրներ գտնելն էր, որովհետև տեղի ունեցավ կոստրոսի առաջին արշավանքից անմիջապես հետո», («Փորձ», 1880, № 1 հավելված, էջ 33):

սինքն երբ շրջում է Ատլանտյան օվկիանոսի իսպանական ափերը, նորից գրում է. «Եւ Կէ (67) օրն զաշխարհս բոլորեցաք»։ Այսպիսով, իրականում «զաշխարհս բոլորեցաք»-ը վերաբերում է իսպանական ափերը շրջելուն և ոչ թե շուրջերկրյա ճանապարհորդությունը։ Համենայն դեպս այդ նալը տվյալ երկուղում որոնումների չի գնացել, այլ միայն շրջել է Ատլանտյան օվկիանոսի Պիրենեյալի ափերը։ Այդ են նշում Մ. Երզնկացու բոլոր տվյալները։ Երկրորդ, Բիսկայում Մ. Երզնկացին երբ լսում է, որ մեկնող նալ կա, խնդրում է, որ «զիս նաւն առնու, այլ չեմ կարեր քաշեր անձինս, թաղաթն հատաւ»։ Եթե Մ. Երզնկացուն հայտնի լիներ, որ նալը գնում է ոչ թե որոշված ուղղությամբ, այլ անհայտ ու անհույս որոնումների, մինչդեռ իր նպատակն էր ետ դառնալ, որովհետև «չի կարէր ցամաքով լետ դառնար» ինչու պիտի նա համաձայնվեր նալ նստել։ Երրորդ՝ Ս. Մարտենը սխալվում է, երբ կարծում է, թե Կադիքսից նավապետը եւ գնացել էր Սեպիլիա, Բզարելային ղեկուցելու արշավախմբի նավարկության արդյունքների մասին։ Իսկ նա չէ, որ ոչ Ֆրանսերեն թարգմանության և ոչ էլ հայերեն բնագիրը ոչ մի կերպ մատնացուցչ չեն անում, թե բացի Մ. Երզնկացուց Սեպիլիա գնացել են նաև նավի ղեկավարներից (տես «Journal Asiatique», 1826, էջ 368)։ Ահա Մ. Երզնկացու համապատասխան վկայությունը. «Այլ այս տեղացս բաժանեցայ և գնացի ի Սանթամարիայ Կատալաին և անտից ի Սիպիլիա, որ ղխաթունն տեսա և յետ դարձայ, և ելա անտից նաւով ժԸ (18) օրն եկեալ հասա յաշխարհն Մադրագոց...»։ Այս վկայության հիման վրա անհիմն է Ս. Մարտենի հետևյալ ասույթը. «Ուրեմն զարմանալի չէ, որ հայ կախսկոպոսի մասնակցած արշավախմբի ղեկավարները շտապած լինեն գնալու մի քաղաք (Սեպիլիա—Վ. Հ.), որտեղ գտնվում էր այսպիսի ձևաբարկումները ոգևորող մի իշխանուհի, իրենց ճանապարհորդության արդյունքները նրան հաղորդելու նպատակով։ Բասկացի հասարակ նավապետները, որոնք սովորական ձևաբարկության են գնում, ոչ մի պատճառ չէին ունենա, այդպիսի քաղաք անելու» (նույն տեղում, էջ 345, ընդգծումը մերն է—Վ. Հ.)։ Չորրորդ՝ միանգամայն ստույգ է Մ. Երզնկացու այն վկայությունը, թե Բասկերի երկրից (Բուստարիա քաղաքից) մինչև Կադիքս, նավով, մեր հեղինակը հասել է 67 օրում, որովհետև Կադիքսից (Ջիրբալտարով) մինչև Իբանադալի թաղավորության ծովազերյա սահմանը մեր ճանապարհորդը հասել է 18 օրում։ Բասկերի երկրից մինչև Կադիքս և Կադիքսից մինչև Իբանադալի թաղավորության Միջերկրականի արևմտյան սահմանների տարածության հարաբերությունը կազմում է մոտավորապես 1 : 4, ճիշտ այնքան, ինչքան այդ երկու տարածությունների անցման ժամանակի հարաբերությունը։

Այսպիսով, Մ. Երզնկացու տեղեկությունների ուշադիր և մանրադնին քննությունը չի հաստատում ոչ մեր հեղինակի ճանապարհորդության և ոչ էլ Բասկյան նավի ուղեորության բնույթի մասին Ս. Մարտենի և ակադեմիկոս Հ. Աճառյանի կարծիքները։ Բացառված չէ սակայն, որ Մ. Երզնկացու ճանապարհորդությունը կարող էր ունենալ քաղաքական նպատակներ։ Այդ ենթադրությունը հավաստելու համար ստուգեցինք ընկ. Լ. Սաչիկյանի կազմած «Եվրոպայի հայերեն ձևագրերի հիշատակարաններ» աշխատության Ի մասը (1451—1500 թթ. անտիպ) որը վերաբերում է Մ. Երզնկացու ժամանակաշրջանին, դժբախտարար նրան վերաբերող և ոչ մի տեղեկություն չըլտանք։ Իսկ այս նշանակում է՝ քանի դեռ նոր և լրացուցիչ նյութեր չեն

գտնվել մեզ հետաքրքրող հարցի մասին, ֆուում է ընդունել հեղինակի ասածը իր ճանապարհորդությունն նպատակի մասին: Ի դեպ նշենք, որ նման ճանապարհորդություն, ուրիշների կողմից, մինչև Երզնկացին կատարվել է և վերջինս առաջին ճանապարհորդը չէր այդ կողմերում¹:

Առաջարկվող բնագիրը առաջին անգամ լույս է տեսել Ս. Մարտենի ֆրանսերեն թարգմանությունում 1826 թ.²: Սակայն որոշ հեղինակներ, օրինակ Ալիշանը³, Ա. Ղազիկյանը⁴, Բ. Սարգսյանը⁵, առանձին քաղվածքներ բերել են ձեռագիր բնագրից⁶:

Ավելի ուշ՝ 1937 թ. Մ. Երզնկացու ճանապարհորդական գրառումների վեներտիկում պահվող ընդօրինակությունը հրատարակվեց «Բաղմավէպ-ում»⁷: Վերջինս երբ համեմատում ենք Հայկական ՍՍՏՊ-ի Պետական Մատենադարանի

¹ Տե՛ս «Բաղմավէպ», 1937, № 2-3, էջ 50-53:

² Journal Asiatique, Paris, 1826 (december), p. 321-373, „Relation d'un voyage fait en Europe et dans l'Océan Atlantique, a la fin du quinzieme siecle, sous le regne de Charles VIII, par Martyr, eveque d'Arzendjan, dans la grande Armenie, ecrite par lui même en armenien, et traduite en français par M. Saint-Martin" խորագրով:

Սույն հրատարակության բնագրին նախորդում է ներածականը, որը գտնվում է 321-346 էջերում, իսկ բնագիրը՝ 346-373 էջերում: Իմիջիայրոց աղագ. չ. Աճառյանը գրում է. «...նրա(Մ. Երզնկացու—Վ. չ.) ինքնաձեռագիր պատմությունը... այժմ պահվում է Փարիզի „Bibliothèque nationale"-ում (էջ 285): Սակայն, ինչպես մատնացույց է անում „Catalogue Manus. bibl. nationale"-ը (էջ 160) Մ. Երզնկացու ճանապարհորդական նոթեր պարունակող (№ 65) ժողովածուն ընդօրինակված է 1684 թ., այլ խոսքով Մ. Երզնկացուց ժողովրդական 190 տարի հետո: Այդ հատվածը բերում ենք բառացի. „texte copie en l'an ԹՂԿ=1133 de l'ere armenienne (=1684 de J-C.), a Constantinople...par le scribe Martiros" (p. 160):

Վենետիկի Մխիթարյանները Փարիզի վերոհիշյալ բնագրից 1857 թ. ընդօրինակել են իրենց մատենադարանի համար (Բ. Սարգիսեան «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց...», հտ. Բ, էջ 509): Հետևաբար Ալիշանի, Ղազիկյանի և Սարգսյանի առանձին մեջբերումները ամենայն հավանականությամբ կատարված են Մ. Երզնկացու ճանապարհորդական նոթերի ոչ թե Փարիզի ձեռագիր բնագրից, այլ Վենետիկի 1857 թ. ընդօրինակությունից: Բ. Պատկանյանը, վերոհիշյալ իր հոդվածում, № 40-ի տակ, նշում է Մ. Երզնկացու ուղեգրության և նրա հրատարակության մասին համառոտ տեղեկություններ և ապա ավելացնում. «Ասում են, որ այս թարգմանությունը բնագրի հետ միատեղ առանձին հրատարակվել է Փարիզում» (էջ 33): Ավելի ուշ, Ա. Ղազիկյանը «Հայկական նոր մատենագիտություն և հանրագիտարան հայ կյանքի» (հտ. 1, Վենետիկ, 1909-1912) աշխատության մեջ նշում է, որ Երզնկացու այս աշխատության ֆրանսերեն թարգմանությունը և հայերեն բնագիրը միասին հրատարակվել է Փարիզում 1828 թ. (էջ 1890): Սակայն այդ հրատարակությունը չկարողացանք գտնել:

³ Ալիշան, Հայ-Վենետ, էջ 195-197:

⁴ Ա. Ղազիկյան, «Հայկական նոր մատենագիտություն...», հ. Ա, էջ 1890:

⁵ Բ. Սարգիսեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց, Մատենադարանին Մխիթարեանցի Վենետիկ, Վենետիկ, 1924, հտ. Բ, էջ 509:

⁶ Մ. Երզնկացու ճանապարհորդական նոթերի մի տարբերակը, ինչպես ասացինք, գտնվում է Փարիզի ազգային մատենադարանում № 65-ի տակ (տե՛ս F. Macler „Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque nationale", Paris, 1908, p. 159), որը ժողովածու է ընդօրինակված 1684 թ. Կ. Պոլսում: Մե՛զ համար անհասկանալի պատճառով այստեղ ճանապարհորդությունը նշված է 1488-1491 թթ.: Նույն սխալն էլ կրկնել է աղագ. չ. Աճառյանը «Հայոց անձնանունների բառարան»-ի մեջ (հտ. Գ, էջ 285):

⁷ № 2-3, էջ 49-60:

№ 3488 ձևագրում¹ գտնվող այս ուղեգրության մի այլ տարբերակի հետ, ապա նկատում ենք զգալի շեղումներ, որոնց ավելի ընդարձակ և ճիշտ ընթերցանությունը տալիս է այստեղ հրատարակվող տարբերակը. բերենք մի քանի հատվածներ դեմադրեմ:

Վենետիկի օրինակ
(Բաղմավէպ, 1937 թ.)

Պետ. Մատ. № 3488 ձևագիր

1. էջ 58 «Եւ յելեալ բաղում յաշխատութեամբ հետիոտն զիմեկ ելեալ զնացի բաղում քաղաքաւ ի հասաւ ի կասնկոնիայ»:

1. էջ 13. «Եւ ելեալ բաղում աշխատութեամբ հետիոտն զիմեցի ի Փուէր քաղաք և անտից ի Լուսինոայ քաղաք և անտից ի մեծն յմեկանո քաղաք և կեցա Ն (5) օր և ելեալ զնացի բաղում քաղաք, հասայ ի կասկաւնիայ»:

2. էջ 56. «... ևւ անտից բաղում յաւուրս հասար ի քաղաքն Սանթամարիայ տ Աքսուր ամենաւրջնեալ և փառաւորեալ շապիքն է սուրբ Աստուածածնին, խիստ զարմանալի շէնք է...»:

2. էջ 11. «... ևւ անտից բաղում աւուրք հասար ի քաղաքն Սանթամարիայ զտար ուր ամէնաւրջնեալ և փառաւորեալ շապիքն է սուրբ Աստուածածնին. ևւ անդ շատ ջերմ օրս կա: ևւ այն եկեղեցին, որ ամէնաւրինեալ սուրբ շապիքն է սուրբ Աստուածասաւրն խիստ զարմանալի շէնք է»:

3. էջ 60. «Եւ ելեալ հասի ի Սանթամարիա և մտայ ի նաւ. և բաղում փորձանաց զիպայ»:

3. էջ 17. «Եւ ելեալ հասի ի Սանթամարիա, Տլօրեք և եկեալ յԱհրաւնիա մտա ի նավ և բաղում փորձանաց զիպայ»:

4. էջ 58. «Հարաւայ զիհի զուռն ի զուրս կելնես մեծ շատովան մի կայ և սպիտակ փողխոզներով նստել է և իւր նշաններն և հլուներն զինչ որ բնդաւն ի հոն կու ծախուի»:

4. էջ 14. «Հարաւայ զիհոռն զուռն ի զուրս կելնես մեծ շատովան մի կա և բոլորն ոսկելիւնոցն է և ի հլուսուտյ զուռն ի զուրս մեծ շատովան կայ. և ըստակն և փողերն ի հոն Նն զրեւ և նստեալ են և նշաններն, հլուներն ամէնն ի հոն կու ծախի զինչ որ փընդուես»:

Ընչպես տեսնում ենք բոլոր ընդգծված նախադասությունները բացակայում են «Բաղմավէպ»-ի հրատարակած բնագրում: Սակայն այս քանով չի սահմանափակվում այս հրատարակության բնագրի առավելությունները: Վերոհիշյալ օրինակներին կարելի է ավելացնել նման այլ մեջբերումներ ևս, ինչպես նաև բառերի բաղմավիւլ աղավաղումներ, որոնք գտնվում են «Բաղմավէպում» հրատարակված տարբերակում. օրինակ

ոչ թե

այլ

- 1. «ևանց ծախողներն է»
- 2. «ոսկով գերեզման»
- 3. «հասեալ ի Տուրնուրան քաղաք»
- 4. «այլ և հոմ ճար չուելիւր զնայու»
- 5. «զուռն ոնց կացիս հետեակ քալել»
- 6. «ամէն քանի մեծութիւն զգթոր մի է»
- 7. «հասար յաշխարհն Դուղէլք ազգին»
- 8. «մեղաբար հասար»

- 1. «ևանց ծախողներն են»
- 2. «ոսկով զարդարած»
- 3. «հասեալ ի զուռն Առան քաղաք»
- 4. «այլ զիմով ճար չուելի ի զնայու»
- 5. «զուռն ոնց կացիս հետեակ քալել»
- 6. «ամէն քաղի մեծութիւն զգթորմ»
- 7. «հասար յաշխարհն Դուղէլք ազգին»
- 8. «մեղմաբար հասի» և այսպես...:

¹ Բերում ենք Մատենադարանի № 3488 ձևագրի համառոտ նկարագրությունը՝ ձևագիրը ժողովածու է, թերթեր՝ 280, մեծությունն՝ 14,5×10, նյութ՝ թուղթ, վիճակ՝ բավարար, միասյուն, տողեր՝ 19, նոտրդիր, ժամանակ, վայրը և զրիչը անհայտ: Ձևագիրը նորոգված է 1857 թ.: Ձևագրի 170ր—180ա էջերում գտնվում է Մ. Երզնկացու ուղեգրությունը:

² Նշում ենք այս հրատարակության էջերը:

«Բազմավէպ»-ում հրատարակված օրինակը չունի վերնագիր, եղածը՝ Մարտիրոս եպիսկոպոսի Երզնկացու ուղեգրութիւն ի Սպանիա, վերնագրել է հրատարակիչը, մինչդեռ առաջարկվող բնագիրն ունի հետևյալ երկարաշունչ վերնագիրը «Այս է պատմութիւն Ֆրոանկաց երկրին, զոր տեսալ է Եզրնկացի Մարտիրոս եպիսկոպոսն. և գրեաց զքաղաքացն, զոր տեսի աչօք իմօք և զորպիսութիւն, որ է այսպէս»։ Ասել է, թե խորագիրը Մարտիրոս Երզնկացու գրածն է։

Արդարութեան դեմ չմեղանչելու համար, նշենք նաև, որ «Բազմավէպ»-ում հրատարակված տարբերակի ներքոհիշյալ մեջբերման ընդգծված հատվածը չի պահպանվել սույն հրատարակութեան բնագրում «և մէծ եկեղեցի կայ ի մէջ քաղաքին, որ ժ՛՛ մարդ կու մտնէ ի մէջն. և խիստ զարդարած է ոսկով, ս. Մարկոս յաւետարանիչն եկեղեցին է և երկու երգեհոն կայ ի մեջն»¹։

Սակայն որպէս կանոն Պետ. Մասնադարանում պահվող օրինակն այժմի լավ ընթերցումներ է տալիս։ Տեղի սղութեան պատճառով որոշ գիտողութեւններ միայն անհրաժեշտ գտանք նշել բնագրին կից, որպէս ծանոթագրութեւններ օգտագործելով մասամբ Սեն-Մարտենի գիտողութեւնները։ Բնագիրը բերում ենք նույնութեամբ, մասամբ փոխել ենք կետագրութեւնը, իսկ բացահայտ մի երկու սխալները ուղղել ենք։

170^բ Այս է պատմութիւն Ֆրանկաց երկրին, զոր տեսալ է Եզրնկացի Մարտիրոս եպիսկոպոսն. և գրեաց զքաղաքացն, զոր տեսի աչօք իմօք և զորպիսութիւն, որ է այսպէս.

Ես՝ Մարտիրոս միայն ա[նու]ամբ եպիսկոպոս Եզրնկացի ի սուրբ Կիրակոսու անապատէն ի Նորգեղակ գեղէն, որ ի վաղուց հետէ փափաքէի սուրբ զլիսավոր առաքելոց գերեզմանին և սուրբ Յակոբայ գերեզմանին տեսանելու։ Եւ ի յորժամ հասեալ ինձ, անարժանիս արժանաւորիլ տեսեալանց նոցա, զի հանապազ սիրտս փափաքէր, բայց ումք, ոչ կարի յայտնել զխորհուրդ սրտի իմոյ և հանապազ տագնապէի ի սրտի իմում։

Թվին ԶԼԸ (1489) հոկտեմբերի ԻԹ (29. ելալ լիմ վանացն և եկեալ մեղմարար հասի ի Ստամպոլ և յԱստուծոյ յաջողութեամբն գտեալ նաև մի, մտի անտ, Վրթանէս սարկաւազոֆն։

ԶԼԹ (1490) յուլիսի ԺԱ (11) ի Ստամպոլու ելաք և մտաք ի նալ մի՞ Ֆոանկի հոկտեմբերի Ա (1) ելաք ի Վէնէժ, որ կոչի Վէնէտիկ. քաղաք մեծ և փառաւոր և ինքն է ի մէջ ծովուն է շինած. 211 (24000) տուն է. և խիստ փառաւոր և հարուստ քաղաք է։ Եւ մեծ եկեղեցի մի կայ ի մէջ քաղաքին, որ ժ՛՛ (10000) մարդ կու մտնէ ի մէջն, [և խիստ զարդարած է ոսկով, սուրբ Մարկոս յաւետարանիչն եկեղեցին է և երկու երգեհոն կայ ի մէջն] և Բ (2) թեաւոր ոսկի առիւծ է շինած ի մէջն։ Եւ այլ շատ եկեղեցիք կայ ի քաղաքն և շատ վանորայք կայ ի բոլոր քաղաքին, ամենն ի մէջ ծովուն է շինած։ Եւ մեծ մաւտան մի

¹ Ընդգծված նախադասութեւնները մուծեցինք սույն հրատարակութեան բնագրում նշելով ուղիղ անկյուն փակագծերի մեջ։

կալ առջև եկեղեցոյն սուրբ Մարկոսի և ի յ զբանն շատ ի վեր Դ (4) դե-
ղին պղընծէ ձի, շինած և կանկնեցուցած մեծ մեծ և զԱ (1) Ա (1) ոտ-
վին ի վեր են կալեր: Եւ հարաւ կողմն, ի ծովուն դիհն, հաց ծախող-
ներն են: Եւ Բ (2) մեծ սուն է կանկնեցուցած՝ Ա (1) ին վրայ թեաւոր
առիւծին և ի մէկալին սուրբ Գէորգ կանկնեալ է: Եւ թագաւորին դար-
պասն ամէն պարիս[պ]ն ոսկով զարդարած: Եւ այլ շատ ազդի ազդի
բաներ կալ, որ ով կարէ պատմել զքաղաքին աղէկութիւն: Եւ կեցաք
ԻԹ (29) օր և մտաք ի նաւլն և զնացաք ՓԳ (13) օրն լԱնքօնիայ և ան-
դից Լ (30) արն հասաք յաստուածապահ մեծն Հոռմ, ուր և սուրբ և
1720 փառաւորեալ ամենագովելի սուրբ մարմինքն է՝ սուրբ յլխաւոր առա-
քելոցն՝ սուրբ Պետրոսի և Պողոսի: Եւ զնացեալ ևրկի[ր]պագեցաք և մե-
ղաց թողութիւն խնդրեցաք մեզ և մեր ծնօղացն և մեր ևրեստաւորա-
ցրն և կենդանեաց: Ը (7) ամիս կեցալ և զամենայն տնօրինական տե-
ղանքն տեսանքն: Տեսաք, զի է սուրբ առաքելոցն նշխարքն ի Հոռմ քա-
ղաքէն ի դուրս, ի հիւսուսային կողմն յարեմտից դիհն, փոքրիկ քա-
ղաք հետ Հոռմա քաղաքին գետն Ի (2)-սին մեջ քաղաքովս կու անցա-
նի, որ կոչի Սանթանկէլօ: Եւ սուրբ Առաքելոց եկեղեցին դուռն արեւելք,
է (7) բարձր և ահեղ դուռն ունի, և ի միջին դուռն թափծու է մուֆրախ՝
և ի մէկ փեղկ սուրբ Պետրոսի և միւսն՝ սուրբ Պողոսի: Եւ ի Հոռմայեց
յարեմտից դիհն ի ներոն թագաւորին դարպասին դիմաց, սուրբ Պետ-
րոսի խաչելութիւն տեղն է: Եւ ի մէջ քաղաքին իւրեանց զընտանին
տեղն է: Եւ ի Հոռմայ ի դուրս, շատ մի հեռու, սուրբ Պողոսի զլխատ-
ման տեղն է, ի հարաւայ կողմ դիհն. և կալ մօտն քաղաքին այն տեղն
է Քրիստոս հանդիպեցաւ սուրբ Պետրոսի[ն]: Եւ քաղաքին յեզրն Սան-
1720 ճուան եկեղեցին է, որ Ի (2)-սին զլուխն ի հօն է ամ յպողջ մարմ-
նով: Եւ ի քաղաքին մէջն, ի հարաւույ դիհն, Գրիգոր Ակոսկանդացոյն
զնդան է, եկեղեցի է հիմակ: Եւ այլ յառաջի մէջ քաղաքին Սանթէլինայ
կալ, յայն եկեղեցին Ճ (100) սրբոց նշխարք և այլ շատ բազում զանա-
զան փառաւորութիւն կալ, ի մէջ քաղաքին ԲՌ և ԷՃ Հ' (2774) եկե-
ղեցի կալ ի Հոռմ և ԸՌ (8000) սրբոց գերեզման կալ ի քաղաքն և ի
դուրսն: Եւ յամէն ար Ժ (10) — Ի (20) եկեղեցի շուրջ կու գալի, մեծ
և փառաւոր եկեղեցիք, և յամէն օր ի զլխաւոր սուրբ առաքելոցն կեր-
թալի և մեղաց թողութիւն խնդրէի, ով կարէ պատմել յեզուաւ զփա-
ռաւորութիւն սուրբ եկեղեցեացն և քաղաքին: Եւ Գ (3) անգամ ի պա-
պին² մօտն տարան զիս և խիստ սէր և շաղաւաթ արաւ ինձ, թուխթ
ևրեստ ամէնն զարմանային, ամէն ար կու տանէր հետ ինձի զուրուցէր:
Թվին ՋԽ (1491) յունիսի Թ (9) ևլաք ի Հոռմայ և բազում օուրք
ԽԶ (46) օրհն հասաք յաշխարհն Դուղէշք³ ազգին, որ են արմանք: Եւ
զնացաք ի մեծնի Կոստանցիայ և այլ բազում քաղաքս, անցաք յեզր
1730 Ըոին գետովս և զնացաք ի մեծ քաղաքն յ Պազլ, որ և բոնեցին, թէ
չաշուտ էք: Եւ այլ բազում քաղաքօ զնացաք ի Ֆոսկօթ, որ շատ
հիանալի բան տեսաք: Եւ անտից բազում արուրք զնացաք ի Ֆրիբու-

¹ Իմա ս. Հրեշտակապետաց զգլակը, Հոռմի Ռիո դի Բորդո թաղում:

² Իմա Իննոկենտիոս VIII ճենովացի, իշխել է 1484—1492 թթ.:

³ Իտալական արտասանութեամբ «leuesco», իմա զերմանացիներ:

լիս, որ ասացին թէ ԳՃՌ (300 000) այգի կայ այս քաղաքիս, մեծ հարկով հարկեցին դմեզ: Եւ անտից՝ ի Ստրազրուլիս, և անտից բազում քաղաքօ, յաղում աւուրք հասաք ի Կապլեր, որ խիստ մեծ հարկեցին: Եւ անտից բազում աւուր Ըոին գետովն գնացեալ հասաք ի մեծահամբաւ քաղաքն ի Կօլօնիայ, որ և ասացին թէ ԲՃՌԻՌ (220 000) տունն է: Խիստ մեծ և զարմանալի քաղաք էր: Եւ անտ էր մոզուց թագաւորաց գերեզմանն: Եւ Գ (3) գլուխն ի վերայ գերեզմանացն դրած էր: Եւ անտ էր ԺԲՌ (12000) սրբոց նշխարք, ամէնին գլուխն մեծ եկեղեցուն մի մէջ է շարած, որ ամէն մարդ կու տեսանէ և մարմինքն գերեզմանած: Եւ եկեղեցի մի այլ, խիստ գեղեցիկ, ԻԴ (24) սուրբ կուսանաց մարմինքն սնտկով դրած. և այն եկեղեցին, ուր մոզուց թագաւորացն գերեզմանն է, ի վեր քաշած է և զէմերեսին զսուրբ || Աստուածածինն նօպաթ ի դուրս է քաշած և ըստ իւր սուրբ արժանեացն զարդարած և տէրն մեր Կրիստոս ի գլխին: Եւ Ա (1) թաճմէր դրած ի գլուխն անգին գոհար ակներով և մարգարտով զուգած, որ գին չիկայ. հարցաք յեկեղեցոյն երէցն, թէ ինչ դատար գնոչէ լինի այս, նայ ասաց, թէ ԲՃՌ և ԺԵՌ (215000) Ֆլորի է խարճ եղեր: Եւ ի սիրտն սուրբ Աստուածածինն մարգարտէ խնծորմ էր կապած, քան զընկուղ մի է: Եւ ի բոլորն ԺԲ (12) հատ մարգրիտ, ամէն հատ քան ի փոքր գլթոր, մէջ ընդ մէջ Դ (4) ակ, Բ (2)-լալ և Բ (2) իաղութ, ամէն քարի մեծութիւն գլթորմ: Եւ լաւաք խորանին բոլորն ԾՁ (56) դեղին պղղընծէ գերեզման ի վեր քաշած և Ձ (6) գերեզման դեղին պղղընծէ ոսկով զարդարած ի վեր քաշած ԳՃԿԵ (365) լուսամուտ ունէր, ամէն լուսամուտի յերկայնութիւն 'Ի (3) գիրկ: Եվ եկեղեցին ԵՃ (500) կամարի վրայ է, բարձր և ահեղ, և զինչ աշխարհի բան կայ զամէնն ի դրուց ի դիհն նաւա[ատ?] էր կտրած: Եւ

174ա եկեղեցոյն լուսամտերն ամէնն զունս ի զունոց || ճամբով զարդարած: Եւ զանկակապուոճ քան ի բերդ մի, մեծ և ահեղ զանկակ մի կախած, որ ԻԸ (28) հոգի կու քաշէ: Եւ այլ բազում եկեղեցիք և վանքեր շատ, որ չի կարացի կամ քաղաքին և կամ եկեղեցոյն պատմութիւն ի գիր զարնել: Եւ կեցաք յայն քաղաքն ԻԲ (22) օր և խիստ հարկեցին զմեզ: Եւ յորքան յեկեղեցին մտէաք մեղաց թողութիւն խնդրեցաք. և ապա ելաք ի մեծէն Կօլօնիու հոկտեմբերի ԻԵ (25) և բազում քաղաքաւ հասաք ի թագաւորաց գերեզմանատուն քաղաք, որ է Ալամանաց ազգին: Եւ անտից բազում աւուրք հասաք ի քաղաքն Սանթամարիայ տ Աքս¹, ուր ամէն աւրհնեալ և փառաւորեալ շապիքն է սուրբ Աստուածածինն: Եւ անդ շատ ջերմն ջուր կա: Եւ այն եկեղեցին, որ ամէնաւրհնեալ սուրբ շապիքն է սուրբ Աստուածամաւրն, խիստ զարմանալի շէնք է, ամէնն ոսկով զուգած. և Գ (4) դեղին պղղընծէ սիւն է կանկնեցուցած և ոսկած. յեկեղ[եցոյն ի մեջտեղն և մեծամեծ դեղին սիւն և սուն գլխըններն ոսկով զուգած: Եւ մեծ ոսկէզօծ սնտուկ մի կա մարգարտաշէն և սուրբ աստուածամօրն

174բ ամէնաւրհնեալ սուրբ շապիքն է ի ներս: Եւ կե || ցաք անդ ԺԸ (18) աւր, մինչև որ բացին, որ արժանի եղաք տեսնելու և մեղաց թողութիւն

¹ Իմա էքս-լա-Շապել (գերմ. Ասխեն), որի եկեղեցին նվիրված է ս. Մարիամին: «տ Աքս»-ի փոխարեն մեր բնագրում հանգիպում ենք «գտակ» ձևով: Վերջինն աղավաղված է, ուստի փոխեցինք «Բաղմավէպ»-ում եղած բառով:

խնդրեցաք մեզ և մեր ծնողացն և մեր արևիտաւորացն: Եւ դասասաց վարդապետք կային և խիստ մեծ հարկօք պատուեցին և մեծարեցին զմեզ: Եւ անտից ելաք զնացաք բազում, աւուր բազում քաղաքաւ, հասաք մեծն Յունիքս¹, ուր թագաւորն անդ նստի Ալամանաց: Եւ կեցաք անդ ժև (11) աւր: Եւ անտ է Քրիստոսի, ամենագոր սուրբ թագաւորին, տեսոն մերոյ և փրկչին Յիսուսի Քրիստոսի սուրբ ֆթան, որ ի ժամ խաչելու թևանն կապեցին, Կրիստոսի սուրբ աստուածընկալ արեամբն ներկեալ էր և արժանացաք սուրբ տեսոյ նորա: Եւ մեղաց թողութիւն խնդրեցաք: Եւ անդի ելեալ բազում աւուր, բազում աշխատութեամբ, բազում քաղաքաւ հասաք յաշխարհն Պլանտրիու: Եւ լեզու չի գիտէաք զըրուցելու: Եւ խիստ դժարութեամբ ելաք անտից և բազում աւուրք հասաք յաշխարհն Բնկուզաց² և զնոցա լեզուն այլ չի գիտացաք: Ետքա այլ ձկնակերք էին, զինչ մեծ և անեղ ձկունք կայ յայն ծովն է, որ է համատարած ծով և ծովն եզեր չունի: Եւ անտից դարձեալ յարեմուտս

173ա կոյս և եկեալ հասաք բազում աւ || ուր յաշխարհն Պրանցօզաց ի քաղաքն Սանտաւնիթ: Եւ այն քաղաքն կպիսկոպոսաց և թագաւորաց և թագուհոց պերեզմանատուն է, գեղեցիկ և փառաւոր քաղաք: Եւ եկեղեցիք և յօաք եկեղեցիք (ուն, ուր գերեզմանքն է և լեկեղեցոյն ձախ դիհն Գ (4) կող է դրած ձկան, ամէն կող և (5) գիկ է երկանքն և Գ (3) թիղ չափեցի զլանքն և ասացին թէ յայտ ծովս կայ վիթխարի ձուկն: Եւ կեցաք աւր մի և ելեալ անտի հասաք ի մեծահամբաւ քաղաքն ի Փարէզ գեկտեմբերի ժթ (19) և մտեալ ի քաղաքն կեսաւրն: Եւ լերիկունն գնացեալ ի մէկ սիպիտալ մի հանկաք: Եւ ի մեկայլ օրն լետի ժամուն հասաք յաւաք լեկեղեցին մեծ և գեղեցիկ և զարմանալի, որ մարդ լեզվով չի կարէ պատմել. և յաւաք եկեղեցին ունի Կ (3) մեծ դուռն, յարեմտից դիհն և ի միջի դրանն Բ (2) փեղկին մէջն Քրիստոս է կանգնեալ և ի վերայ դրանն Քրիստոս ի դատաստան է նստեալ զինք ոսկի վարխախով է զարդարած և Կ (2) հրեշտակք յաջ և ի ձախ կանկ-

175բ լն)եր են, և յաջ զիհու հրեշտակն բոներ է || զայն սիւնն որ զՔրիստոս կապեցին և զգեղարդն ուր Դրիստոսի կողն խոցեցին, և ի ձախ դիհն հրեշտակն կանկներ է զսուրբ խաչն բոներ: Եւ աջ դիհն սուրբ Աստուածածինն է չոքեր է ի վերայ ծնկանցն և ի ձախն սուրբ Յովաննէս և սրբոցն Ստեփաննոսի նախավկային: Եւ յառջն հրեշտակապետք և ամենայն և սուրբ ամենայն: Եւ Ա (1) հրեշտակին ձեռքն կիշիւք կա, որ զմեղքն և զվարձք կիշոէ մարդոցն և ի ձախ դիհն քիչ մի վալր է քաշեր սատանայ և զեքն ամենայն հետ իւր և զմեղաւոր մարդիկքն զըն-

¹ Իմա Բեզանտոն. ֆրանսիական Դու գեպարտամենտի զլիավոր բազարը:

² Հրատարակիչը գրում է. «Երկար ճանապարհորդելէն վերջ կհասնի յաշխարհն Բնկուզաց, այսինքն Անդգիա, սակայն զժրախտարար, լոնլեայն կանցնի այդ երկրի մասին» (Բազմավեպ, 1937 թ., էջ 53): Արդարացի է Ս. Մարտենի զիտոգությունը, որ Մ. Երզնկացին եթե Անդգիա զնացած լինեք, ապա նա տարօրինակ կերպով չէր լուր իր նախ նստելու մասին (նույն տեղում, p. 355, note 4): Նա հավանաբար հասել է կայիի (Պագե—կայե նեղուցի շրջակայքը) և Պիկարդիայի ծովափի կողմերը, որոնք մի ժամանակ պատկանել են Անդլիային և այդ վայրերը նա համարել է յաշխարհն Բնկուզաց:

³ Իմա Սեն-Դնի, Փարիզից հյուսիս:

ճիլ են և ի դժոխքն կու քաշեն: Եւ դժոխքն հանած է զարհուրելի դիմաւք, որ մարդ ի տեսոյն կու սասանի և սոսկայ: Եւ ի դէմ Քրիստոսի սուրբ առաքեալքն և մարգարէք և սուրբ հայրապետք և զամենայն սուրբ ազգի ազգի զունով և ոսկով զարդարած և շինած է զարքայութիւն, որ մարդ ի տեսոյն կու փափակի և փառաւորի: Եւ այլ ի վեր հանած է ԻՆ (28) թագաւոր թաքն ի գլխըներն և կանկներ են մարդու պէս. և այլ ի վեր գաիրամայր սուրբ Աստուածածինն ոսկով զարդարած զուն ի զունոց, որ կանկներ են և յաջ և ի ձախ սուրբ հրեշտակ[ա]պետք ի սպասաւորութիւն: Եւ այլ Պ (3) լուսամուտի բոլորն ամէն մէկ մէկ քան ի կալմ է: Եւ եկեղեցին որ կու մա[ն]ին ի ձախ դիհն հանած է անտաշ վէմ մեծ զսուրբն Քրիստափոր և Քրիստոս յուսն և ի փայր զնահատակութիւն սրբոյն Ք[րի]ստափոցի: Եւ յաւազ խորանին բոլորն Քրիստոսի անօրինականքն և այլ բազում և զանազան զարդարանք, որ մարդ երբ կարէ լեզվաւ պատմել: Եւ քաղաքն խիստ մեծ և զարմանալի և Բ (2) գետ կու մանէ ի մէջն և կէսն ի դուրս չի ելնոր: Եւ քաղաքին մեծութիւն և զաղվորութիւնն ով կարէ պատմել: Եւ կեցայ ի Փարէզ ժԳ (13) աւր և անտից Ա (1) ընկեր մի այլ եղաւ մինչև ի Ստամբուղ՝ քաղաք և ֆուսցի միայն զաւուրս ժ (10) և հասեալ ի դուռն Ուսան² քաղաք, բազում աշխատութեամբ և զաի ֆոսանկ սարկաւազ մի, ընկեր եղօ մինչև Կաստիլար՝ քաղաք և անտից ի մեծն Փոթէր⁴ քաղաք: Եւ անդ էր Քրիստոսի պատանքն, որ տեսաք: Այլ ընկեր չգտայ մնացի միայն և ապաւինեալ յԱստուած և ի սուրբ Յակորու աղօթքն և ամենակալն: Եւ ելեալ բազում աշխատութեամբ հետիոտն դիմեցի ի Փունթ քաղաք. և անտից ի Լուսինտայ քաղաք. և անտից ի մեծն Յիւլիանոս քաղաք և կեցա Ե (5) օր. և ելեալ գնացի բազում քաղաք հասալ ի Կասկաւնիայ. և անտից Ապաւինեալ³. և անտից ի Կաստէլիայ, և անտից բազում աշխատութեամբ, միայնակ զԱստուած ունէի ազնական և հաստակ յաշխարհն Պայունայ, որ և քրիստոնեակքն մեծ սիրով ընդունեցան և հարկեցան, քան զչափն ի վեր, և կեցայ Չ (6) օր, և ընկեր չգտա, ապաւինեալ յԱստուած և ի սուրբ Յակոր և ելեալ դիմեցի զաւուրս բազում աշխատութեամբ յաշխարհն Պիսկային, որ են ձկնակերաց երկիր, ի Պիսկայ քաղաք լեզր ծովուն: Եւ անտի[ց] ի Սան Սերաստիան, որ ըսպիտտլին տէրն այրի և կինն խիստ անչափ սէր արարին և պահեցին զիս Ե (5) օր յայն քաղաքն: Եւ Բ-Գ (2-3) անգամ ժողովք արարին ինձ և այն քաղաքին պէս սիրուն մարդ չտեսայ: Եւ անտից ի ծովափն

¹ Հափանարար էստամպը ('Estampes, այժմ 'Etampes) Փարիզից հարավ:

² Մեր բնագրի «ի դուռն Ուսան քաղաք» հատվածը «Բաղմավէպում» հանդիպում ենք «ի Տուրնուրան քաղաք» ձևով (հմմտ. Մարտենի թարգմանությունը «la ville de Douthnouran» p. 360): Մարտենը տվել է անհրաժեշտ բացատրություն՝ «կարծում եմ, որ այս աղավաղված անունը Տուր քաղաքի անունն է, կամ ավելի հավանական է Տուրենի, որը գտնվում է Փարիզից Պուատյե ճանապարհի վրա...» (p. 360, note 4): Մարտենին թյուրիմացության մեջ է գցել «տուրնուրան»-ի սխալ բառանջատումը, մեկ էլ «բ» և «թ» տառերի զրչի շփոթումը: Առսքը վերաբերվում է Օրլեանին:

³ Այժմյան Շատելլրոն:

⁴ Իմա Պուատյե:

⁵ Ս. Մարտենի և «Բաղմավէպ»-ի բնագրում «Ապղոնիայ» ձևով: Մարտենը նույնացնում է Օրիսոնի հետ:

ի ներս գնացի բազում օտարք, և ընդ որ գնացի խիստ հարկեցին, և—² (5-6) քաղաք և անցեալ գնացի բազում սուրբ և հասեալ ի մեծն Փոթթընկալեց և կեցա 'Բ (4) օր և երեալ միաքն հասա ի Սանթանալք. և անտից ի Սանմաթէաս. և անտից ի Սանթեկանա. և անտից ի Սանմիսան՝ լեզր ծովուն, և շատ սէր արարին մեզ. և անտից ի Սանարխա-
 177ա թօր՝. և անտից ի Պետաց՝ քաղաք, և անտից բազում աշխարհէլք: ՉԱստուած ունէի աւգնական չլի աշխատեալ և նուազեալ հասալ լամէհարհնեալ և փառաւորեալ, ա\|ի\|կզերալոյս տաճարն և ի զերեզմանն արրոյն Յակորալ, ուր սուրբ մարմին է ի քաղաքն ի Կալիցիալ³: և և գնացեալ մաի ի սուրբ զերեզմանն և անկեա ի վերալ երեսաց խոց, երկիրպապի և մեղաց թողութիւն ինզրեցի ինձ և իմ ծնօղացս և իմ երեխատաւորացս: Եւզում արտասօք զփափաք սրաիս կատարեցի. որ է կղեալ ի մէջ սուրբ սեղանին զեղին պզրնձէ և 'Ե (3) կուպղալքով է փակած և զինքն մարդապէս շինած է ի վերալ սուրբ սեղանին, որ նրասեր է աթոսով և թաքն ի զլուին և ի վրայն փալալ գումալթ մի կապած: և և կեկեցին խաչանման է մեծ և փառաւոր գումալթով և երկու զիճն գանկապոճեր, և կեկեցինն 'Գ (3) սապաղալ, ԵՃՉ (206) կամարի վրա է. և 'Ե (4) գուս ունի շարասլ զիճուն գունն ի գուրս կինն մեծ շատութան մի կա և բոլորն ոսկերչինոցն է. և ի հիսուսալ գունն ի գուրս մեծ շատութան կալ: և և բստակն և փոզերն ի հոն են զրեր և նրասեալ են և սշաներն, հլուներն աւէնն ի Ս հոն կու ծախփի զինչ որ փրնդոհա: և և բարեմաից զրանն լառչե, ի ցած է, ալլ ի վեր աղբեր զալ: և և բարեկից զրանն ի վերեն Քրիստոս է նստեր աթոսով, Ապամա մինչև ի կատարած լաշխարհիս, զինչ որ կղեր է և լինելոց է գամէնն հանած է: և և գալլ ամբօ վալիչութիւնն, սփ կարէ պատմեր և և կացի անդ ՉԵ (84) օր ալլ չի կարացի կենալ զի թանկութիւն էր ինզրեց\|ի\| և իմ մեղացն թողութիւն և ծնօղացս և ամենաքն երեխատաւորացս: և և ուր սուրբ մարմինն է սուրբ Յակորալ, հասա երկաթով մանար փանջարա է շինած: և և ալլ խիստ շատ փառաւորութիւն կալ սուրբ Յակոր, բալլ չի կարացի զիր արկանել, առի գաւրհնութիւն սուրբ Յակորալ, և և կրեալ զիմեցի լեզր լաշխարհի, լեզր սուրբ սաստուածածինն, որ սուրբ Պօղոս Առաքեալն իւր սուրբ ձեռքն է շիներ, զոր ֆսանկերն սանն Սանթամարիալ Ֆէնիսալանալ⁴, բազում աշխատութեամբ և բազում վիշտ քաշեալ ի ճանապարհին: և և հանդիպեալ բազում ֆիստակար զազանաց և հանդիպեցալ փանք⁵ մի մեծ, որ սասցին թէ Ի (20) հոյին երախով չի կարեր անցանիլ՝ զու ինչպէս ազատեցար և և կեկալ հասի լաշխար-
 178ա հրն Ս չոլանի⁶, որ և նոքա ալլ ձկնալկերք են և զկեզուն չի զիալի, բալլ

¹ Իմա Օվյեդո, որի զլիսավոր եկեղեցին կոչում է San-Salvador:
² Իմա Քետանդոս (Պալիսիալում), նախահանգիստ Ատլանտյան օվկիանոսի ափին:
³ Իմա Պալիսիա. նահանգ հյուսիս-արեւմտյան Իսպանիալում, որի զլիսաւոր քաղաքն է Կոմպոստելլը: Ունի մի հոյակապ եկեղեցի ս. Հակոբին Նվիրված (իսպանացիներին հովանավորը), որի անունով էլ քաղաքը հաճախ կոչում են Սանտ-Յագո (Saint-Jacques de Compostelle).
⁴ Իմա Ֆինիստերրե հրվանդանը՝ Cabo de Finistérre: Այդ պատճառով էլ Մ. Երզրնկացին այն անվանում է յեզր լաշխարհիս:
⁵ Այգպե՝ Ս. Մարտենի մոտ և Վաղմազկալում. ազճատված բառ:
⁶ Հրատարակիչը վերապահութեամբ գրում է «Lihanes Alava? վերադառնալով հիւսիս» (Վաղմազկալ, 1937 թ., էջ 80, ծանոթ. 37):

խիստ կու հարկէին և տանէ ի տուն կու տանէին և դարմանալին, թէ
 ոնց ազատեցար ի փանքերէն: Եւ եկի բազում քաղաքաւ ընդ եղերը հա-
 մատարած ծովուն¹ և զլեզուն ընտւ չէի հասկանայ, բայց փափին թուխ-
 թոփս հարկէին: Եւ եկեալ քաղաք մի, որ մեծ գետ կու գալը. լեզերն ի
 վեր դոր ԿԼ (68) կամար էր՝ կարմունջ էր կապած և անցեալ հասեալ
 ի մեծն Վիլվազ², և կեցալ անա Գ (3) օր և անցի ելեալ զնացի ԻԷ (27)
 օր և հասալ լամէնարհնեալ քաղաքն ի Կենդարեալ, որ և մեծ հարկօք
 պատակեցին զիս և կեցալ անգ է (7) ար: Եւ գտալ մեծ նաւ մի, որ
 ասացին թէ ՉՌ (80000) դանթար բեռն ունի և ազաչեցի զբրեցանին
 թէ ասացէք, որ ՔԻս ի նաւն անու, ալլ չեմ կարեր քաշեր անձինս,
 թագաթն հասաւ: Եւ քա կու դարմանալին թէ, Քալսաչափ աշխարհս գուն
 ոնց կարացիր հետեակ քաշել: Եւ զնացին զնաին աւրն ազաչեցին թէ,
 Քալս հալս կարգաւոր է ի նախ առ, զի հետու աշխարհէ է եկեր, և զի
 178բ չի կարեր պամքոյ լեռ գտնար: Կարգացին ॥ զպափուն թուխթն, որ
 լեզերն և նաւախարն ասաց, թէ Վասնում ի նաւս, ապա ասացէք գարալ
 որ զիանալ, ես ի համատարած ծովուն կերթամ, լիմ նաւս պաղրկան
 չի մաներ, ալս գատար մարդս, որ կալ նախ ծառութիւրք ևն, մեք
 զմեր արեւնու թարկն սպեր ևնք, լԱստուած ապաւինեալ եմք, թէ որ
 նասիպնիս բերէ, որ Աստուած ազատէ զմեզ, որ բոլորենք զաշխարհս
 նա լաւ է և թէ չէ, նալ գալն Աստուած զիտէ: Ալլ զիտով ճար չունի ի
 զնալու, թէ գու ալլ գալիլ ես, նա խիստ բարի, արի եկ ի նախ զհացդ
 ու զկերակուրդ, զխումսդ մի հոքար, քո նախից փարձքն ալլ քեզ: Ալն
 կարգաւորքն ալլ ասացին, թէ ՎԷՆԷՆք ալլ հողի ունիմք զգորալ պաղաթմասն
 և ալլ զինչ Աստուած պատրաստէ մեկնք հոքամք: և զարձան ի քաղա-
 քին: Եւ ի ժամուն տակնն ամենին հասկացուցին թէ ալս հալ կարգա-
 ւորս ի նաւ կու մտնէ, ձեր սպոցն արեւուն և ձեր հողուս, իրեն սպրիս
 ժողովեցէք. անչափ բարիք բերին, քանի շատ ուտէի չի հատնիր և
 մտա ի նաւսն նոր կիրակին երեքշաբթին. և ԿԷ (67) օրն զաշխարհ,
 բոլորեցաք և եկեալ լեզր աշխարհիս քաղաքն, լԱնդալուզիալ ելարս
 179ա լալն քաղաքն որ ի մէջ ծովուն էր³, և կեցաք լալն ॥ քաղաքն ԺԻՒ (19)
 օր, զի մեծ ալկոծութեան հանդիպաք և կտտաքն պատառեցաւ, եկին լի
 ալն սեղն շինեցին: Եւ ինքն խիստ զեղեցիկ քաղաք էր, փոքրիկ և բա-
 րով լի: Ալլ ալս սեղացս բաժանեցալ և զնացի ի Աանթամարիալ Կա-

¹ Այսինքն Ատլանտյան օվկիանոսի եզերքներով. հետեապես Մ. Երզնկացին Ֆինիս-
 տերք հրփանդանից թերթիկ է հարափ և օվկիանոսի արեւելյան եզերքներով շարունակել
 ճանապարհը:

² Մարտինի ընդգրում Վիլվազ՝ ձեռով (Բ. 366), համապատասխան ծանոթագրու-
 թյան մեջ նա գրում է. «Այս քաղաքը Բիլրաուն է Բասկերի մայրաքաղաքը» (Բ. 366, note-
 2. հմմտ. «Բաղմափէպ», 1937 թ., էջ 60, ծանոթ. 38): Եթե սա ճիշտ է, ապա Մարտիրոսը,
 տարօրինակ կերպով լսում է Բասկերի երկիր իր վերադարձի մասին (որտեղ եղել էր
 սկզբում, Ֆրանսիայից մեկնելիս): Ընդգրի համապատասխան հատվածը չույց է տալիս, որ
 Մարտիրոսը Ֆինիստերք հրփանդանից զուրս գալուց հետո Ատլանտյան օվկիանոսի արե-
 ղով շարունակել է իր ճանապարհը: Մեզ համարական թվում է, որ Վիլվազ՝ ձեռ
 վիլյա-
 զարսիս քաղաքի անվան աղճատումն է: Վերջինս գտնվում է Ատլանտյան օվկիանոսի
 Արոս ծոցի ափին:

³ Իժա Կաղիբոս, նախահանդիստ Լեոն թերակղզու վերջին մասում:

տալուսին¹ և անաից ի Սիպիլիա², որ զՊաթունն³ ահաս և լիա դարձալ, և ելա անաից նախով ժվ (18) օրն եկեալ հասա յաշխարհն Մազրպացոց⁴, զի քամին ի դէմ էր Ֆրոթունայ էր, եկեալ ևս անխալօպրինա⁵: և ևս ալ ի նաւ չմտի և եկեալ կեցալ անդ Գ (3) օր և եկեալ միաջնակ ի Մազրպացոց մէջն ի ներս մեծ լեռո⁶ մի անցի և Ե (2) օրն և կէսն եկի ի Մազրիպաց թախան ի Կրանաա⁷, որ Պաթուն էր առել, մեծ բարէլի քաղաք է և կացի ժ (10) օր և եկեալ և (5) օրն հասա ի մեծն Աճաէն, որ անդ էր դասաառակն Քրիստոսի և անդից եկեալ գնացի ի Պախա և անաից Յուվիաա և անաից ի Սանսաէֆան և անաից ի Պուրդուս և անաից ի Չնչիլիա, որ և ի ներքս և ցօ կդա և կեցալ ժ (10) օր, որ պարոնն հուքմ արաւ հէքիմին, քիչ մի լաւցուցին և անաից յԱլմանց և անաից ի Ֆալաա և ի Մունդէզ և անաից ի մեծն Սադիւս, որ էր 179ր ԽԵԽ (45000) տուն: և ևս ևս || կրկին հիւանդացա և փորացաւ եղէ և այն կարգաւորքն մեծ սիրով ընդունեցան և ինձ ծառայութիւն արին մինչև, որ առողջացա և ելեա և գնացի և ի ժև (15) օրն հասա ի մեծն Վալէնցիա, որ էր ՀԽ (70000) տուն և կեցա 'Ի (4) օր: և ևս անաից կց գնացի ԻԱ (21) աւրըն ի Պարալօն մեծ քաղաքն, որ էր ԱԽ (90000) տուն և կեցա և—Ձ (5—6) օր: և ևս անաից ի Երբնիան⁸ և անցեալ աշխարհն Կարգալին⁹, և գնացի դաւուրս 1,2 (36) և հասի յաշխարհն Յիցիլալին¹¹, և անցեալ բազում քաղաքաւ յաշխարհն Փրանցաւզաց գաւուր բազումք, անցա յաշխարհն աուքրս Միլանին և եկեալ յաստուածապահ քաղաք ի Ֆրիարօլ: և ևս խիստ մեծ հարկօք պատակեցին դիս, ժև (15) աւր անէ ի տուն մեծարելով, Աստուած շէն պահէ զիրենք: և ևս եկեալ հասա ի մեծն Ալէքսանդրիալ: և ևս անաից գաւուրս բազում եկեալ հասա ի ճնվէզ քաղաք, եկի որ ի նախ մանուի և գալի լիմ յաշխարհն, նա ծովս պղտոր էր, և ազութիւն էր, չկարացի մանուլ ի նաւ, դարձալ ի ևս և շատ աշխատութեամբ բազում աւուր հասա յԱլբիթա, որ Ե (2) ոսկով կզներ էր 180ա կանկնեցուցած: և ևս || բազում քաղաք հասա ի Մոնթիֆիասիաւ և անաից ի Վիթէրպօ և անաից բազում քաղաք, բազում աւուրք եկեալ հասի դարձեալ ի Հոոմ քաղաք, առ ոսա սուրբ զլիաւոր առաքելոցն, թվին ԶԽԵ (1196) փետրվարի ի (20) մեծ պահոցն մտա ի մեծ Հոոմ: և ևս եկեալ հասի ի Սանթամարիա, Տլօրիթ և եկեալ Յանքաւնիա մտա ի նախ և բազում փորձանաց դիպա, որ ի մահուն յաւտարեցալ և ոչ գալն վիշա քաշէի:

1 Իմա Sainte-Marie de Guadeloupe հայտնի սրբավայր նոր-Կաստիլիայում:
 2 Իմա Սեվիլիա:
 3 Իգարելյա թագուհին:
 4 Իմա իսպանական արարների 'Երանագայի թագավորությունը:
 5 Ըստ Մարտենի Սալորբենա, նախահանգիստ Միջերկրականի ավինի:
 6 Իմա Ալերա-Նեվադա:
 7 Իմա Գրանադա բարբր:
 8 Իմա Քաղիվա, քաղաք Վալենսիայում:
 9 Իմա Բերպինա. 1642 թ. միացվեց Ֆրանսիային:
 10 Իմա Կաստիլիա:
 11 Ճիշտ է Մարտենի այն գիտողությունը, որ Մարտիրոս Երզնկացին շաշխարհն Սիցիլիային՝ առելով հասկանում է Պրոֆանսը, որն արդեն 15 ամիս է միացվել էր Ֆրանսիային: Պրոֆանսը կառավարողներն ունեին Սիցիլիայի թագավորական տիրազօր, որոնք աշտակ կառավարել են համարյա 200 տարի: Հնարավոր է, ենթադրում է Մարտենը, որ սովորություն եղած լինի Պրոֆանսին անվանել Սիցիլիա կամ Սիցիլական թագավորների երկիր (նույն տեղում, p. 371, note 5):